

խրուած քար մը կը գտնուի. կ'ըսուի թէ երբ հրեաները Ս. Ստեփանոսը ըմբռնեցին ու քարկոծեցին՝ Ս. Կոյսը Ձիթենեաց լեռնէն կ'իջնէր, և տեսնելով բազմութիւնը որ սուրբը շրջապատած կը քարկոծէին, հոս կենալով աղօթեց անոր համար և իր սրտով մարտիրոսութեան կը քաջալերէր: Քրիստոնեաները այս տեղը կը պատուեն ուխտագնացութեամբ: Անոր մօտ դէպի արևելք կը գտնուի վէժ մը՝ ուր կ'ըսուի թէ Յիսուս Ծաղկազարդի օրը Ձիթենեաց լեռնէն էջէն իջնելով նստաւ աւանակին վրայ: Նաև, ըստ աւանդութեան՝ հոս պատահեցան Աբգար թագաւորին զեսպանները, այդ պատճառաւ այս վէժը կը պատուեն քրիստոնեաները մեծ ուխտով (Հան. էջ 263-64):

Ս. Կուսին աղօթած տեղը հեռու չէր այն սպիտակ ժայռէն՝ որուն վրայ իր գօտին ձգեց Թովմաս Առաքեալին՝ վերափոխման ժամանակ: Ս. Երկրի պատմիչները կը գրեն թէ ի յիշատակ Ս. Ստեփանոսի՝ այս տեղւոյն վրայ մատուռ մը շինուած է, ու կ'աւանդուի նաև թէ նշնկի ծառ մը կար հոն, որուն տերևներէն հողագործները կը հաւաքէին հիւանդներու բժշկութեան համար: Այժմ նոյն մատրան աւերակ մէկ պատը կայ միայն, միւս մասերը գոյութիւն չունին (Մար. Ա. հատ. էջ 307):

16. Ս. Տիրուհիին աղբիւրը(*). — Ս. Կուսին գերեզմանը Գեթսեմանիի մէջ ըլլալով՝ Արաբացիք Սիրքի Մարիամ անունը տուած են քաղաքի դրան, պարիս-

(*) Ըստ ժողովրդային աւանդութեան՝ աղբիւրներուն մէջ կը բռնակին բարի հոգիներ, ինչպէս նաև երջակները թաղուած սուրբ մարդոց եւ ուրիշ սուրբերու հոգիները: Այս միեւնոյն գաղափարը կը տեսնուի Ս. Գրոց մէջ ալ. Պիւր Էլիմ կը նշանակէ «Ջրիւր աստուածոց»